Տ. ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՏՈՆԻԿՅԱՆ

Ծնվել է 1974 թ. դեկտեմբերի 21-ին Էջմիածին քաղաքում:

1991 թ. ավարտել է Էջմիածնի Անդրանիկ Օզանյանի անվան միջնակարգ դպրոցը:

1991-96 թթ. ուսանել և ավարտել է Մանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 ուսումնական տարում սովորել և ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Զ լսարանը:

1996 թ. մայիսի 16-ին՝ Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Գևորգ Զ Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը» թեմայով:

1997 թ. ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդարանում որպես գործավար-քարտուղար:

1998 թ. մայիսից նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի օգնական՝ եկեղեցական-կրոնական հարցերով:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1999 թ. դեկտեմբերից մինչև 2001 թ. օգոստոսը վարել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց Տների հոգևոր տեսչի պաշտոնը: Միաժամանակ 2001 թ. համատեղության

կարգով ղեկավարել է Մայր Աթոռի ճարտարապետաշինարարական բաժնի գործունեությունը:

2000-2001 թթ. մասնակցել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանում կազմակերպվող բիզնեսի և կառավարման մեկամյա հատուկ դասընթացներին:

2001-2003 թթ. ծառայել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի օգնական՝ ֆինանսատնտեսական գծով:

2001 թ. սկսած «Ասպվածաշնչային Ընկերության» Հայաստանի գրասենյակի խորհրդի անդամ է:

2001 թ. ՀՀ Կառավարության բարեգործակա՛: ծրագրերի համակարգման հանձնաժողովի անդամ է:

2003 թ. հունիսի 26-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Արագածոտնի թեմում:

2003 թ. հոկտեմբերին Չեխիայի Հանրապետությունում «Վիլեյմով Ուղղափառ ակադեմիայում» մասնակցել է բնապահպանական հատուկ դասընթացներին և արժանացել վկայագրի:

2004 թ. հունվարից «Սուրբ Ներսես Մեծ» բժկական կենտրոնի Տնօրեն խորհրդի անդամ է:

2001-2005 թթ. սովորել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում և ավարտել Կարմիր դիպլոմով:

2005 թ. հունվարից նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ: